

Պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Բեկ

Գիտությունների փաստագրերի գործիչ

ԱՆԱՆՈՒՆ ՀԱՅ ՊԱՏՄԻՉԻ ՆՈՐԱԳՅՈՒՏ ԵՐԿԸ ԹԻԼԻՍԻ 1795 թ. ԱՎԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղա-Մահմադ-խանի (Ախտա-խանի) կողմից¹ Թբիլիսիի ավերումը, 1795 թ. սեպտեմբերի 11-ին, մանրամասն նկարագրվել է թե՛ վրաց և թե՛ հայ պատմիչների ու ականատես-գրողների կողմից:

Հայ գրողներից ամենից առաջ հիշատակության արժանի է Սերոբ զրիչը, որը մեզ թողել է պատմական մի երկասիրություն, հետևյալ ընդարձակ վերնագրով՝ «Համառոտ պատմություն աւերեցման Փայտակարան Մայրաքաղաքիս² ի խանէն աղայ Մահմեդի ի 1795 և ի 11 սեպտեմբերի»³: «Համառոտ պատմությունը» կցված է նույն Սերոբի 16-վանկանի մի ոտանավորը, 84 տողից բաղկացած⁴, ապա և հետևյալ հիշատակարանը. «Ծրեցաւ յանպիտան և ի պանդուխտ երիտասարդէ յուժնմնէ ի 1796 և 26 Մարտի յամայի Փայտակարանի»⁵:

Ապա նշելու է նույն Սերոբի Պատմությունը պարունակող ձեռագիր դավթարը (ֆոլիանտը), որ այժմ մտցված է Լրատանի Պետական թանգարանի հայերեն ձեռագրերի ժողովածուի մեջ և մեր կողմից ջուլցակագրված է Արմ. № 162-ի տակ:

Այս դավթարի զանազան էջերում տեղ են գտել այլևայլ հիշատակարաններ, որոնցից մեկում հիշված է «Հաղպատոյ գործակալ տէր Մխիթարի» (և ոչ տեր Ստեփան—Սայաթ-Նովայի) նահատակությունը մասին⁶:

¹ Պարսից շահ, 1794—1796 թթ.:

² Փայտակարանը տվյալ դեպքում Թբիլիսին է, մինչդեռ հնում Աղվանքի մասն էր. այս մասին տես՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, Введение в историю государственных образований Юго-Кавказа [Caucasica I], Тифлис, 1924, стр. 81; *ego-же*, Тифлис, его основание и краткий исторический очерк,—Путеводитель «Тифлис и его окрестности», Тифлис 1925, стр. 18—19; *ego-же*, Фома Мецонец о Грузии, Тбилиси, 1935, стр. 35.

³ Գյուլս ա. Բ. Աղամյան. Դիվան հայոց պատմության, հատոր X, Թբիլիսի, 1912, էջ 353—374:

⁴ Նույն տեղում, էջ 374—376:

⁵ Նույն տեղում, 376:

⁶ Լ. Մելիքսեթ-Բեկ. Նոր նյութեր Սայաթ-Նովայի առասպելական «նահատակության» շուրջը,—«Պրոլետար», 1935 թ., № 189: Լ. Մելիքսեթ-Բեկ, Блуждающая палица Абашидзевых,—«Сообщения Груз. Филиала Академии Наук СССР», т. I, 1940, № 10, стр. 779—780.

1795 թ. Թբիլիսիի ավերման ականատես-բանաստեղծ Շամշի-Մելքոն ևս թողել է 16-վանկանի մի ոտանավոր, 41 տողից բաղկացած, հետևյալ վերնագրով՝ «Ի վերայ աւերման Տփիսի քաղաքի զալստեամբ Աղայ-Մուհամմէդ խանի»¹, ուր նմանապես տրվում է հիշյալ թվականի սեպտեմբերյան զեպքերի նկարագրութունը՝ ինքնակենսագրական տվյալների հետ խճճված:

Պատմաբաններին լավ ծանոթ է Հարություն Արարատյան Վաղարշապատցու ինքնակենսագրութուն-մեմուարները, որ զրված է եղել հայերեն ու ռուսերեն և թարգմանվել իրեն իսկ ձեռքով, ապա և ռուսերեն հրատարակվել առանձին գրքով՝ Պետերբուրգում 1813 թվին² (նույնը և հայերեն՝ Պերճ Պոռչյանի թարգմանությամբ, Թբիլիսիում 1892 թվին)³: Այստեղ ևս, ի միջի այլոց, գտնում ենք տեղեկութուններ 1795 թ. ավերման մասին:

Վերին աստիճանի հետաքրքրական է Պաշտուր Աբովյանի՝ կիսով արձակ և կիսով չափածո զրվածքը նույն թեմայի շուրջը, հետևյալ վերնագրով՝ «Վերջին հրաժարական քաջագոր արքային Հերակլի», որ միմիայն նորերս հայտնագործվեց և հրատարակվեց⁴ և որը շուրջ 1840 թ. պիտի զրված լինի:

Մի երկու ոտանավոր XIX դարի երկրորդ կեսին հորինված է ինչպես հիշյալ ավերման, նույնպես և 1803—1804 թթ. տեղի ունեցած ժանտախտի առթիվ: Սրանք են՝ ա. «Երգ ողբերգական ի վերայ Տփղիս քաղաքի ասացեալի տէր Մելքիսեթ քահանայէ Տփիսիսեցւոյ»⁵, և բ. «Ի վերայ մահացաւոյ, որ ի Տփիսիս» Գրչիկ-Օղլանի»⁶:

Պոսելով Պարսկաստանում գործող երեւելի հայկազունիների մասին, Գալուստ Շերմազանյանը (Շերմազան-Վարդանյան) ևս, ի միջի այլոց, առաջ է բերում ականատեսների՝ Մելիք-Մաջնունի (Մեջլումի) և աղա Յազուր ներքինապետի (մականվանյալ Քութալիի) վերաբերյալ վկայությունները Թբիլիսիի ավերման կապակցությամբ, որ նա, Շերմազանյանը, հավաքել է Թբիլիսիի ծերունի հայ քահանաների ասմունքով⁷:

Աղա-Մահմադ-խանի արշավանքի հեռավոր արձագանքները որոշ արտահայտություն են գտել նաև միջնորդաբար գրի առնված այս կամ այն զրույցի մեջ՝ Սայաթ-Նովայի անձնավորության կապակցությամբ: Այդպիսիք են, նախ՝ Գեորգ Ախվերդյանի հաղորդածը 1852 թվին Մոսկվայում

¹ Մ. Միսնաարյանց. «Քնար Հայկական», Մ.Պ.Բ., 1870, էջ 564—565:

² Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат, писанная и пересведенная им самим с армянского на российский, с приложением 6 гравированных эстампов, изображающих виды городов персидских, ч. I—II.

³ Վաղարշապատցի Հարություն Արարատյանի կյանքը, թարգմանեց ռուսերենից Պ[երճ] Պ[ոռչյանց]:

⁴ Խաչատուր Աբովյան. Նախաշուիդ կրթութեան ի պէտս նորավարժից. Լուսատեղ-նմանահանություն. Առաջարկում և ծանոթություններով Ռ. Զարյանի. Երևան, 1940, էջ LXXXIX—XCI:

⁵ «Ճառքաղ», 1860—61, էջ 198:

⁶ «Քնար Հայկական», էջ 565—566:

⁷ Գալուստ Շերմազանյան. Նյութեր ազգային պատմության համար. Երեւելի Հա. հազունք ի Պարսկաստան, Ռոստով (Դոնի վրա), 1890, էջ 52—73:

հրատարակած գրքում¹, ապա Գեորգ Ասատուրի՝ 1936 թվին տպված «Հուշերը»²:



Այժմ մեր տրամադրության տակ է Վենետիկի մխիթարյան, հանգուցյալ Դիոնեսիոս վարդապետ Կալատոզյանի (Գաղատոզյանի) ազգականներից Վրաստանի Պետական թանգարանի համար գնած հայերեն գրչագրերի հավաքածուի ձեռագիր տետրը, որ մեր կողմից ցուցակագրված է № 20-ի տակ: Տետրը, որ բաղկացած է ընդամենը 4 թերթից, պարունակում է անանուն հեղինակի գրությունը Թբիլիսիի ավերման մասին, հետևյալ ընդարձակ վերնագրով՝ «Համառոտ պատմութիւն անհնարին կոտորածովք աւերման Տփիսիս քաղաքի, զոր արար յելուզակօրէն պատերազմաւ աղա Մէհէմէտէտ խանն, փախուցեալ զձերունի արքայն Վրաց զՀերակլ Նրկրորդ, յամի տեառն 1795»:

Անանուն պատմիչի այս երկասիրությունը մի շարք կետերում հիշեցրնում է Սերոբ գրչի գրությունը և նույնպես «Համառոտ պատմութիւն» է կոչվում, բացի դրանից, իր կոմպոզիցիայով նման է նրան և նույնպես ոտանավորով ու հիշատակարանով է վերջանում:

Ոտանավորը բաղկացած է 10-վանկանի 4 տողից և կարդացվում է այսպես.

Ոմն եհար գաւար, ոմն եղև թշուառ,
և ալ ոք օտար՝ էառ գայն գաւառ:
Միայն մնաց վայ մեռելոց
և գերեւոց տառապելոց:

Ոտանավորին անմիջապես հետևում է մի ընդարձակ հիշատակարան, որ կարդացվում է այսպես.

«Դրեցաւ ի Տփիսիս Փայտակարանի ի մագապուր ղերծելոյ՝ յամի տեառն 1796 յունվարի ընդարձակութեամբ բառից յաճախութեան:

«Յորմէ յապաւելով իմն խիտ առ խիտ տերեւոց բազմակոյտ բառից՝ զպտուղ պատմութեան ի լոյս արևու հոլանեալ՝ վերծանողացն մտաց հասու զործել կամեցեալ՝ համառօտեցաւ ի Արևմուտս ի Կոստանդնուպօլիս 1796 յունիսի»:

Այսպիսով, մեղ հասած երկասիրությունը համառոտություն է՝ Կոստանդնուպոլսում 1796 թ. հունիսին կատարած՝ այն ընդարձակ պատմությունից, որ գրվել է Թբիլիսիում 1796 թ. հունվարին, հետևապես նախքան Սերոբ գրիչը նույն 1796 թ. մարտի 26-ին նույն Թբիլիսիում կավարտեր իր «Համառոտ պատմությունը»:

Անանուն հայ պատմիչի երկասիրությունը, մի շարք կետերում հիշեցրնելով Սերոբ գրչի «Համառոտ պատմությունը», բայց և այնպես հիմնականում տարբերվում է վերջինից:

¹ «Սայաթ-Նովա», էջ Ժբ—Ժգ:

² Գ. Ասատուր. Մի պատմիկ իմ հուշերից (Սայաթ-Նովայի մահվան 140-ամյակի առթիվ), «Գրական թերթ», 1936 թ. հունվարի 31, № 3:

Սակայն ամենակարևորն է նշել այստեղ, նախ, նորագյուտ հայ պատմիչի նշած ժամանակագրությունը Թրիլիսիի ավերման վերաբերմամբ, որ «գաղղիացւոց» «ազգովին ապստամբութեան», այսինքն՝ «Ֆրանսիական բուժունական ռեուլցիայի» թվահամարով է պայմանավորված¹։ «Յաւուրս թագաւորութեան Կոստանդնուպօլսոյ Սուլթան Թէլլէմի երրորդի»² և ինքնակալութեան Ռուսաց Նեկտաօրինեայ³ կայսրուհւոյն, ի չորրորդ ամի⁴ ազգովին ապստամբութեան Կաղղիացւոց»։

Ապա հետաքրքրական է Վրաց Հերակլ II թագավորի դաշնակիցների և հավատարիմ համազործակիցների հիշատակությունը, օրինակ՝ Իմերեթի Սոլոմոն կամ Սողոմոն թագավորի, որին մեր հեղինակն անվանում է «Փոքր Վրաց իշխանն Աշխպաշու Սաղոմոն»⁵, նաև առաջին և երկրորդ սպարապետների՝ «անուն առաջնոյն Կարբիէլ մեծաւոր և երկրորդին Գէորգ մեծաւոր»։ Իսկ ինչ վերաբերում է Հերակլ II-ի հակառակորդներին, սրանց թվում հեղինակը հիշատակում է Գանձակի Զավատ-խանին և Ղարաբաղի Մելիք Մեճնունին։

Թրիլիսիի ավերման նկարագրությունը մեր հեղինակը տալիս է՝ Հհիշելով կոնկրետ կերպով և ոչ մի նահատակի անուն։ Ահա և նրա նկարագրությունը.—

«Ապա տեսեալ թշնամեաց զքաղաքն թափուր ի պաշտպանողաց, գրոհ տուեալ զիմեցին առհասարակ և մահալ հարին կոտորեցին, և ապա յաւար հարկանէին զոր ինչ և գտանէին, տանջէին նաւթեայ հրով զեկեղեցականս և զծերս քաղաքին՝ յայտնել զինչս գաղեալս։

«Գերեցին զմանկամարդս, զկանայս, զգասերս և զմանկունս՝ զորս ի քաղաքին և զորս ի դաշտին ցրուեալս, և զբազումս ի ծերոց, որոց ճարակ ետուն։ Զարքունիս, զեկեղեցիս և զվանորայս դատարկեցին յամենայն զարդուց և սպասուց և ի հուր ծախեցին։ Զարչարէին, սպանանէին, առավել ևս զդենակիցս իւրեանց զմահմետական բերդաբնական անդ, յաւար և ի գերութիւն մատնեալ։ Այս ամենայն գործ կատարեցաւ ի մեջ աւուրց քսանից (ընդգծումը մերն է. Լ. Մ.-Բ.)։

Պատերազմի դաշտում ընկածների թիվը մեր հեղինակը հաշվում է մոտ 50 հազար, իսկ զերիների մասին ասում է՝ «բազում»։

¹ Հմմ. Լ. Մելիքսեթ-Բեկ. Ֆրանսիայի մեծ ռեուլցիան և նրա արձագանքները հայ և վրաց հասարակայնության մեջ, վրացերեն, — ժուռնալ «Իրոշա», 1934 թ., № 9—10, էջ 20։

² Սելիմ Գ. Ղազի, 1788—1808 թթ.։

³ Նկատներինա Բ., 1762—1796 թթ.։

⁴ Ուզիդ՝ «ի վեցերորդ ամի» (հաշվելով 1789 թվից)։

⁵ «Աշխպաշ»-ը նույն «Պաշխաշուխ» — «Բաշխաշուկ»-ն է. տես՝ Լ. Մելիքսեթ-Բեկ. «Բաշխաշուկ»-ի մեկնաբանությունը շուրջը, վրացերեն, — «Ակակի Ծերեթեթի», հոբելյանական ժողովածու, Մոսկվայի անվան Թրիլիսիի պետ. համալսարանի հրատ., Թրիլիսի, 1929, էջ 103—207. նույնի «Ակակի Ծերեթեթու ստեղծագործությունը շուրջը», — «Արշավ», 1940 թ., № 3, էջ 27—29։

* * *

Ստորև մենք հրատարակում ենք անանուն պատմիչի գրվածքն ամբողջութեամբ, նշելով լուսանցքներում ձեռագրի համապատասխան էջերը. շեղատառով շարված տեղերը ձեռագրում համառոտված են պատիվի տակ:

- 1 Համառօտ պատմութիւն անհնարին կոտորածով աներման Տփսիս քաղաքի, գոր արար յեւուզակօրէն պատերազմաւ աղա Մեհեմետ խանն, փախուցեալ գծերունի արեւան Վրաց գէորգի երկրորդ, յամի տեառն 1795:

Յաւուրս թագաւորութեան Կոստանդնուպօլսոյ Սուլթան Սէլիմի երրորդի և ինքնակալութեան Ռուսաց Ներքառնիւնայ կայսրուհոյն, ի չորրորդ ամի ազգովին ապստամբութեան գաղղիացւոց, խան ոմն ծեր, որ իշխէր ի խորին պարսիկս ի նահանգս ինչ, յանուն աղա Մէհմետ խան ներքինի, խորագէտ յոյժ, խորհեցաւ ի միտս թագաւորել համօրէն Պարսկաստանի և անուանիլ Շահ: Սկսաւ ժողովել զօրս բազում յոյժ և կոչեալ զշրջակայ խանս Պարսից՝ քնդհանուր իմն ժողով համաքեալ՝ մերկանայր գխորհուրդ սրտին՝ ճոռոմ ճարտախօսութեամբն ասենաբանեալ, թէ օրինաց կրօնին տարածման և վաղեմի քաջանուն յաղթանակութեանցն պարսից համբաւոյն և համօրէն կրկրին խաղաղութեան և ազգին փառաւորութեան միապետութեամբն իւրով՝ նորոգման իսկ է վրէժխնդիր: Ընդ որ հաճեցեալ ամենեցուն՝ խոստացան նմա զհնազանդութիւն և զգործակցութիւն յամենայնի՝ ի գլուխ տանել զայս խորհուրդ անվրէպ: Որոշեցաւ ի ժողովի անդ՝ առաքել զգեապանս առ թագաւորն Կոստանդնուպօլսոյ և առ կայսրն Գերմանացւոց (գուցէ գաղ-

- 2 զիացւոց) առնուլ և ի նոցունց զհաճութիւն, որոց մինն լռիկ ընկալաւ, բայց միայն, զի տիրեսցէ բովանդակ Վրաստանի, և միւսն եղ թէ ուր... զի եթէ գրաւեսցէ զԲարիլոն, անուանեսցի Շահ: Ընկալեալ զպատասխանիս, իսկ և իսկ ձեռն ի գործ էարկ, առաքելով նախ հասուած ինչ զօրաց յարեւելս կոյս և բանակն մեծ զինի, դէմ եղեալ ի սահմանս Վրաստանի ժամանել՝ ի հնազանդութիւն ածելով զառ ճանապարհին խանս, զիելխանս պարսից մինչև ի քաղաքն Շօշ, ուր խանն ի պրահիմ, զի բարեկամ էր Հերակլ Վրաց արքային, ի զիմի հարեալ առաջապահ զօրացն՝ վաստակեցոյց զնասա յոյժ, մինչև թողեալ զնա զօրացն՝ անցին ի Վիրս կոյս, զի նուաճեալ զսա, զիւրաւ ապա տիրել ունին և նմա: Եւ ի ժամանակին զօրացն մերձ ի սահմանս Վրաց՝ զեսպանս առաքեցին առ Հերակլ, պահանջելով զհնազանդութիւն նորա և զպատանդ և զհարկս յամենայնէ, որպիսզի այսպիսի հպատակութիւն սորին հաստատեցէ զՇահութիւն ներքինոյն: Բացասական պատասխանեալ յետո դարձոյց զգեապանն արքայն Հերակլ և լուր ի Մօղղոգ առ զօրապետն Ռուսաց փութացուցանէր յօգնութիւն իւր ժամանել. զի կայսրունին կացուցեալ էր անդ զօրս քսան և հինգ հազարաց՝ ի պահպանութիւն Վրաստանի, սպասել ազգարարութեան Վրաց: Որում մէկ զօրաց պատասխանի առաքեաց զօրապետն Ռուսաց, թէ՛ մի գանգիտէր

- 3 ի նմանէ քնաս ինչ կրել, և թէ պատրաստ եմ զօրօքս ժամանել, միայն սպասեմ ահա յարքունուստ անդրէն հրամանագրի (քանզի նախապաշարեալ էր զնա ներքինին պատճառանօք այցելութեան սահմանակից քաղաքացն, որոց նախնիք իւր երբեմն տիրէին, սաացեալ ևս էր՝ առին ընծայիւք զգորապետին սիրտ կամ խորհրդով իմն գուցէ թոյլ տուեալ սա՝ նմա նուաճել զՀերակլ և յափշտակել զՎրաստան, զի ապա ինքն եկեալ և հալածեալ զներքինին՝ գրաւեսցէ իրաւամբք զՎրաստանն ողջոյն, որպէս եղև իսկ)։ Զայս պատասխանի առեալ անօգնական ծերունւոյն Հերակլի, վհատեցաւ, զի անպատրաստ գտաւ զօրաժողովն լինելոյ՝ յուսով պարաստական զօրացն Ռուսաց. ապա կոչեցաւ յօգնութիւն զՓոքր Վրաց իշխանն զԱշխաշու զՍաղոմոն, որ հապճեպ գերկոտասան հազարս արանց առեալ փութացաւ ի Տփլիս, որում առաջ ել Հերակլ, մեծաւ հանդիսիւ ընկալաւ ի քաղաք իւր։ Եւ այն ինչ մերձեցաւ լուր թշնամեացն ահա մետասան հազարին զօրաց Սաղոմոնի ի փախուստ ցրուեցան, և մնաց հազար միայն։ Իսկ Հերակլեանքն երկու հազարի մետասան և եթ Եւրօպացի թնդանօթօք, երեք հարիւր արուեստաւորօք, և երկոտասան կառավարչօք և երկրորմբք վարժ՝ առաջին և երկրորդ սպարապետօք անուն առաջնոյն Գարբիէլ մեծաւոր և երկրորդին Գէորգ մեծաւոր. սոքօք միայն ել Հերակլ և զնաց զճանապարհ աւուրց երից ունել զկիրճ մտից թշնամեացն և բանակեցաւ անդ՝ սպասելով Մօղտոքեան զօրացն ժամանելոյ։ Եւ մնացեալ զաւուրս վեշտասան ստուգեաց ի լրտեսաց զմերձենալ թշնամեաց մեծի բանակին, որում հրամայէր ներքինին։ Ծանեաւ և զմիաբանելն ընդ սմա՝ երկոցուն խանիցն Այրարաանեան գաւառին և Կէնճէու՝ Զաւատայ և մէլիք Մէճնունի, ընդ որոց բարեկամ էր և օգնութեան նոցին յուսայր։ Սոքա ընդ ժամանել ներքինւոյն զօրօք ի Կէնճէ (կամ առ երկիւղի, և կամ առ հին մախանացն՝ որ առ Հերակլ) ելին ընդ առաջ նորա, դաշինս կռեցին հպատակութեան, և միաբանեցան ընդ նմա բնաջինջ ի Վրաց զՎրաստան կացուցանել։ Ապա ժողովեալ և սոցա զբազմութիւն զօրաց՝ ասպատակ հանէին, և բանակն մեծ խաղայր ժամանել ի սահման։ Զայս ամենայն լուեալ անգոր ծերունւոյն Հերակլի և զզօրացն թշնամեաց յունաթիւ բազմութիւն՝ տեղի եղ խաղացոյց զաղքատին բանակ իւր ընդ կրրունկն, և եհաս յեզերս այգեստանետոյց իբր կէս փարսախաւ հեռի ի քաղաքէն իւրմէ։ Ապա և թշնամեացն անարգել մըտեալ ընդ կիրճսն յերկրին բանակեցան ի դաշտին Սօղանլըխ անուանեալ գեղջ. և կարգեաց ներքինին զղօրս իւր դասս-դասս և զառաջեաւ առաքեաց զօրապետ մի քաջ չորս հազար արամբք՝ վաստակեցուցանել զքաջանուն զանպարտելին Հերակլ, որպէս զի կռեարաւ մարթասացի ապա ինքն յաղթել նմա։ Լուեալ զայս ամենայն բնակչաց քաղաքին՝ սասանեցան, լքան, լուծան և կարողին՝ էր, որ հեծեալ, և էր, որ հետի խոյս ետուն ի լեռնակողմն Կովկասու՝ զանձինս՝ ապրեցուցանել (որոց պատահեալ՝ փախտեալ մետասան հազարացն Սողոմոնեան գաղթելոց, կողոպտեցին մերկացին զնոսա վոչ օգնելոյ և փախեան)։ Հասեալ թշնամեացն յայնկոյս այգեստանետոյցն, յարձակեցան ի վերայ սակաւաթիւ, բայց հաւատարիմ զօրացն Հերակլեայ, և ժամս չորս պատերազմեալ՝
- 4
- 5

մեծ մասն զօրաց թշնամեաց դիմադրեալ ի թնդանօթացն Հերակլեանց կործանէին, օրինակ իմն իբրեւ ի հատու մանգաղացն քաջաշարժ հնձողաց՝ շեղշաշեղջ շրջեալ՝ դիտապաստ դիզանէին յերեսս յերկրի։ Զոր տեսեալ մնացորդացն՝ լքան, պարտուեցան և փախուցեալ յերեսացն Վրաց՝ անկան ի ռուն բանակն բռնաւորին այնպիսի իմն խռովայոյզ տրտունջ բարձեալ զնմանէ մինչև սակաւիկ միւս ևս, և մտածէր երկպառակուքիւն ի բանակ անդր։ Իսկ բռնաւորին առժամայն հասեալ ի վերայ՝ զիջուցանէր, խաղաղէր, քաջալերէր սնուսա, և խրախուսէր սամիքնեան ի ստացումն աւարից և գերեաց և գրուն բանակն ողջոյն յառաջ խաղացուցանէր, և ընդ առաւօտն ժամանեալ յանդիման աղքատին զօրաց և թնդանօթացն Վրաց սկիզբն առնէր մարտին։ Եւ մինչև ցկէս օր հրացանս առ միմեանս կոյր զկուրայն արձակէին, զի մարախլապատ էր երկիր. ապա ի մերժել միգին յարեւելան հողմոյն՝ աջս ամբարձեալ տեւին զսակաւաւոր զօրս Վրաց քաջալերեալ զօրացան և սքաւ ի նոսին հայեցեալ յանթիւ բազմութիւն (որք էին իբր ութսուն հազար արանց) պատրաստեալ լքան։ Իսկ՝ բռնաւորն ներքինի, որ ի վերայ լերին կացեալ զիտակն ի ձեռն զօրացն հրամայէր հայեցեալ և յայնկոյս քաղաքին տեսանէր զմանկունս, կանայս և զաղջկունս բնակչաց, որք իբր ի սառնամանեաց վարեալ փոթորկէ ձիւնաթաթաւ իմն գլխովք գեղեալ ի դաշտին համակ սպիտակ երնոցէին զայն վայր ընդարձակ, ապա նորոգ խրախոյս առ իւրսն բառնայր՝ փութալ գրաւել զքաղաքն և զօրէն բազէից յայն որս աղաւնեաց խոյանալ։ Դաջալերեալ զօրացն և ևս սաստկացուցանէին զպատերազմ յոյժ, մինչև Հերակլ թեպէտ և բազում արիւթքիւն քաջութեան ցուցեալ էր անդ, հայեցեալ թէ յոյս սակաւ մնացին իւրքն, խորհեցաւ ապրեցուցանել զանձն և խոյս ետ յայլուր յամուր բերդ անկանիլ, և մինչև էր ժամանեալ ի քաղանեաց դուռն, ահա հարած ինչ թշնամեաց այրուծիոց զհետ պնդէին կենդանւոյն ձերբակալել զնա, զոր տեսեալ ի քաղաքէն ուղղեցին զթնդանօթա ի հետամուտս, ոչ թողացուցանէին ժամանել առ նա, մինչև գերծուցեալ հհաս ուր դէմ եղեալն էր։ Արդ պատերազմն ընդ թնդանօթից զօրանայր, և արուեստաւորացն զօրութիւն նուազէր, մինչև տիրեալ սոցա երկիւղ տագնապի ի փախուստ ճէպէին թողեալ զգործիս, մնացին միայն առաջին և երկրորդ սպարապետք երկոքին, որք և ևս արիւարաւ վարեալ զթնդանօթսն՝ զբազումս թշնամեաց տապաստ արկանէին։

7 Բայց երկրորդ սպարապետն ի հրացանիցն թշնամեաց ի մահ վիրաւորեալ, մնաց առաջինն միայն, որ և զվերջին ճիգն ի գործ եղեալ արիւարաւ, բազում կոտորածս արար զնդակօք, ապա ի կողմանց յարձակեալ ի վերայ բազմութիւն թշնամեացն կենդանւոյն կալան զնա և չարաչար սպանին։ Տեսեալ Սաղոմոնի, եթէ մատնեցաւ քաղաքն, փախըստական մարտիւ ճողոպրեցաւ յերկիր իւր, ընդ որում մարթացաւ զերծանիլ նոգեհացեալն անդ՝ ականատես պատմիչս անցիցս, ուր գրեաց։

Ապա տեսեալ թշնամեաց զքաղաքն թափուր ի պաշտպանողաց, գրոհ տուեալ դիմեցին առհասարակ և մտեալ հարին կոտորեցին, և ապա

յաւար հարկանէին զոր ինչե գտանէին, տանջէին նաւթեայ հրով զեկեղեցականս և զծերս քաղաքին՝ յայտնել զինչս զաղեալս:

Գերեցին զմանկամարդս, զկանայս, զղսաերս և զմանկունս՝ զորս ի քաղաքին և զորս ի դաշտին ցրուեալս, և զբազումս ի ծերոց, որոց ճարակ ետուն: Չարքունիս, զեկեղեցիս և զվանորայս դատարկեցին յամենայն զարդուց և սպասուց և ի հուր ծախեցին: Չարչարէին, սպանանէին, առաւել ևս զղենակիցս իւրեանց զմահմետական բերդաբնական անդ, յաւար ե. ի գերութիւն մասնեալ: Այս ամենայն գործ կատարեցաւ ի մէջ աւուրց քսանից:

Ի վախճանի ի Թիւ արկեալ զմեռեալս Վրաց Թէ՛ ի պատերազմի և Թէ՛ ի կոտորածի աստ՝ զտին իբր յիսուն հազարաց և զերեալք բազում: Կացեալ անդ քաղաքաւեր բռնաւորին իբրեւ ամիսս երիս և լուեալ զխաղալ զօրացն Ռուսաց քսան հազարաց ընդ Ալանաց դուն՝ դէպ առ Պարսկաստան և երեք հազարաց՝ դէպ առ ինքն, ինքնահալած եղև համայնիւքն, Թողեալ զՏփիսիք քաղաք աւերակ, խղճալի, մերկ ապրեցելովքն: Ուր դարձ արար ապա Հերակլ արքայ և սուգ մեծ էառ ի վերայ աւերածոց քաղաքին և կոտորելոցն: Վախճան սահմանակցացս խոովութեանց եղև այս, զի

Ոմն եհար զաւար, ոմն եղև Թշուառ,
և այլ ոք օտար՝ էառ զայն զաւառ:
Միայն մնաց վայ մեռելոց
և գերելոց տառապելոց:

Գրեցաւ ի Տփիսիս Փայտակարանի ի մագապուր գերծելոյ՝ յամի տեառն 1796 յունվարի ընդարձակութեամբ բառից յաճախութեան:

Յորմէ յապաւելով իմն խիտ առ խիտ տերեւոց բազմակոյտ բառից՝ զպտուղ պատմութեան ի լոյս արևու հոլանեալ՝ վերծանողացն մտաց հասու գործել կամեցեալ՝ համառօտեցաւ ի Արևմուտս ի Կոստանդնուպօլիս 1796 յունիսի:

Новооткрытая История разорения Тбилиси в 1795 г. анонимного армянского автора

(РЕЗЮМЕ)

Новооткрытая „История разорения Тбилиси“ Ага-Магомет-ханом в 1795 г. анонимного армянского автора представлена в небольшой рукописной тетради из фонда Арм. № 20 Госуд. музея Грузии в Тбилиси. В цикле специальной литературы на армянском языке, посвященной описанию опустошения Тбилиси в 1795 г. и последующих бедствий 1803—1904 гг. (Сероб, аноним—обладатель рукописи Сероба, Шамчи-Мелко, Артемий Арапатский, Хачатур Абовьян, священник Мел-

կիսե՛տ Եբիլիսկի, ասոյ Կիչիկ-Օղլան, Գալստ Շերմազան-Վարտանով), նո-
 ւոօտկրտա՛յա „Կրտկա՛յ Իստորի՛յ րազորենի Եբիլիսի“ սա՛մո րա՛ննո րոի՛շ-
 ւոննո, ոնո ճա՛նո օրիսա՛ննո օ՛նո րազորենի. րոի՛շւոննո օ՛նո ո՛չ
 ի՛ննո, կա՛կ սո՛կրա՛ննա րոճա՛կցի՛յ րո՛ւոնաճա՛կնալնո, Բո՛լո րո՛ստրա՛-
 նո՛յ „Իստորի“, սոստա՛ւննո՛յ Եբիլիսի Ե՛նա՛րո 1796 թ.; րի՛շո՛ւ օ՛նա
 սո՛կրա՛ննա րոճա՛կցի՛յ րո՛րաճո՛ւտա Ե՛նստանտինոփոլո Ե՛ յունո տո՛ո-
 յո 1796 թ. „Կրտկա՛յ Իստորի“ Խա՛րաճի՛ւոննո Խո՛ղի՛մի Ինտրոսնի՛մի
 յո՛նոտա՛մի, յո՛ւճո րո՛ւոճի — րոփտկո՛յ լոտոիսճիսլոննո սո յրո՛ննի
 ֆրանճուզսկո՛յ Բու՛րճուա՛նոյ րոճալո՛ւցի, րոսկո՛ւկո՛ւ ավտո՛ր ճա՛տիւոն
 նա՛ննո Ե՛նա-Մա՛ղո՛մոտ-Խա՛ն (Ե՛նա-Խա՛ն) նա՛ Եբիլիսի րոնոճոճո՛ւ
 „ճա՛րստ-
 րոճա՛ննո՛յ սուլտան Ե՛նստանտինոփոլո Տուլո՛մա ԻԻ Ե՛ սա՛մոճա՛րա՛ննո Ե՛ Րոս-
 սի՛յ Իմփերատրիճո՛յ Նոկտարինոյ (Խ. Ե. Եկատրինոյ) Ե՛ ճոճո՛րտկո՛յ (ճոճո՛ւ
 Բո՛ւ՛՛՛՛—նոճո՛ւ) յո՛ւ ւոսոճոճո՛ւ ւոստաննո Խա՛ղո՛ւ (Խ. Ե. ֆրանճուզո՛ւ)“.

Լ. Մոլիկսոտ-Բոկ